Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

ԿԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՐԱՐԸ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՁՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ

ՀԵՂԻՆԱԿ

Պ. ՍԱՐԳԻՍ ՄԻՐԶԱ ՎԱՆԱՆԴԵՑԻ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

—(1887)—

02.07.2013

44008



8756-Ա

18 NOV 2011

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

ԿԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՐԱՐԸ

891.99
Մ-76
18 NOV 2011

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

ԿԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՐԱՐԸ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՁՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՍ

ՀԵՂԻՆԱԿ

Պ. ՍԱՐԳԻՍ ՄԻՐԶԱ ՎԱՆԱՆԴԵՑԻ

ՆԵՐԿԱՅԱՑԱԾԵԱԼ ՅԱՌԱՋԻՆ ՆՈՒԱԴ
Ի 16 ՅՈՒՆԻՍԻ 1861
Ի ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱՏՐՈՆԻ
ՁՄԻՒՌՆՈՅ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՍ
ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

—(1887)—

ԱՋԳ

Ա. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Սոցն Ողբերգութիւնը թէեւ առաջին անգամ 1858 ին Փարիզի մէջ տպուեցաւ, այլ գրեթէ բոլորովին անտես մնաց հասարակութենէ, իբր ընդ գրուանաւ ծածկուած մնալուն՝ եւ հետեւաբար ձեռքերնիս չ'անցնելուն համար: Այս անգամ վերստին 'ի լոյս կ'ընծայուի կարեւոր փոփոխութեամբ՝ որ ներելի է անշուշտ հնգօրեայ աշխատութեան մի վերայ 'ի 26 Օգոստոսի 1857, զոր եւ անմիջապէս մամլոյ յանձնելու ստիպուած էինք ըստ խնդրոյ Տատեան Ազնուաշուք եւ Ոսումնական Ղերսէս էֆէնտիի:

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ
ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱՆՁԻՆՔ

Ա. ՍՈՒՐԲՆ ՆԵՐՍԷՍ.
Բ. ԹԷՈՂՈՍ, կայսր Յունաց.
Գ. ՊԱՊ, Լեգեոր Հայոց.
Դ. ՁԱՐՄԱՆԴՈՒԽՏ, կին Պապայ և Լեգեոնի Հայոց.
Ե. ԱՐՇԱԿ, որդի Պապայ.
Զ. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ } զօրավար Հայոց.
Է. ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ }
Ը. ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ, զօրավար Յունաց.
Թ. ՄԵՐՈՒԺԱՆ, մարդիկ Հայրենեաց.
Ժ. ԳԱՒԱՌ, հաւատարիմ ծեծն Ներսէսի.
ԺԱ. ՎԱՂԱՐՇ, պաշտօնական Պապայ.
ԺԲ. ԿՈՍՏԱՆԴ, պաշտօնական Տերենտիանոսի.
Զինուորներ, Պահապաններ.

Ա-ՍՔԻՆ և ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԾՆԵՐԸ Պօլսոյ մէջ Թէոդոս Կայսեր պալատը. Երրորդը՝ Հայաստանի մէջ Զիրա-դաշտը. Չորրորդը՝ Հայաստանի մէջ Պապայ պալատը.

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ
ԿԱՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՐԱՐԸ

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՆԵՐՍԷՍ ԵՒ ԳԱՒԱՌ

Ներսէս ալեոր մը վրայ կը ննջէ. Գաւառ կը մտնէ յետոյը նամակով.

ԳԱՒԱՌ

Տէ՛ր իմ, Հայաստանէն նամակ ունիք.

Զարմանալի բան, այս ժամանակս երբէք քնացած չ'էր. պէտք եմ զայն արթնցընել... բայց չէ՛, գուցէ հանգստութեանը արգելք կ'ըլլամ.

Ո՛վ քուն, մարդիկ զքեզ իրենց հանգիստը կ'անուանեն, բայց ես կ'ըսեմ որ կը սխալին. որովհետեւ քու կերպարանքդ ալ սոսկալի է, դուն ալ գրեթէ մահուան չափ աղդեցութիւն կ'ունես մարդկային սրտի մը....

Այս պատկառելի դիմաց վրայի կնճիռը ինչի՞ նշան է, ուսկից կը պատճառի այս կերպարանաց վրայի տրտմութեան գիծերը, եթէ ոչ երեւակայութենէ. և այս երեւակայութիւնը ի՞նչ ատեն մարդուս վրայ կը բռնանայ, գիշերը՝ ի՞նչ ատեն հարկաւորութիւնը բնութեան կը հնազանդի։

Ուրեմն ո՞վ է այն մահկանացուն՝ որ քունը հանգիստ կ'անուանէ. Թող դայ տեսնէ, ահա քունէն պատճառուած հանգստութիւնը. այնպիսի հանգստութիւն մը՝ որ իմ սուրբ Հայրապետս տրտմութեան ու վարանաց Ովկիանոսներու մէջ կը թափառեցընէ, այնպիսի հանգըստութիւն մը՝ ոհ տեսէք, որ Տիրոջս ծնօտներէն արտասուաց կաթիլներ կը հոսեցընէ։

Ա՛լ չ'եմ կրնար համբերել, այնչափ անգութ չ'եմ ըլլար՝ որ Թողում իմ Տէրս երեւակայութեան ճիրաններուն տակ աւելի ևս նեղուի... արթնցընեմ զայն, բայց... արթնցընեմ ու վախճան մը տամ իրեն այս տառապեցուցիչ երազներուն... չէ՞ ես չ'եմ արթնցներ, ահաւասիկ ինք կը շարժի, այո՛ կ'արթննայ։

(Ներսէս կարդնայ)

Ս. ՆԵՐՍԷՍ

Գաւա՛ն

ԳԱՒԱՆ

Տէ՛ր իմ

Ս. ՆԵՐՍԷՍ

Ո՞ւր էիր

ԳԱՒԱՆ

Մէկ ժամ է որ Ձեր շարժումները կը դիտեմ Տէ՛ր իմ; բայց չ'համարձակեցայ արթնցընել։

Ս. ՆԵՐՍԷՍ

Գաւա՛ն, Հայրենեացս վրայ չարագուշակ երազներ տեսայ. յիրաւի երազներու ականջ չ'եմ կախեր, բայց այս կերպ երազները շատ անգամ ստուգուած են. ուր էր որ Հայաստանէն տեղեկութիւն մը առնէի։

ԳԱՒԱՆ

Տէ՛ր իմ, Հայաստանէն նամակ ունիք, ահաւասիկ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ապրիս, որ ինձ ուրախութեան պատճառներ կը հաղորդես։ Գիտէս որ աքսորէն դառնալէս 'ի վեր ինչպէս կը փափաքիմ Հայրենեացս վրայ տեղեկութիւն մը ունենալ։ (Բռնելով աչքերէն) Ե՞րբ եկաւ։

ԳԱՒԱՆ

Իմ ձեռքս անցնիլը հազիւ մէկ ժամ կայ, Տէ՛ր իմ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Բարի, ո՞վ տուաւ քեզ։

ԳԱՒԱՆ

Կայսրը իր ձեռքով։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ուրիշ բան ըսա։

ԳԱՒԱՆ

Ո՛չ, բայց իր կերպարանաց վրայ տրտմութիւն մը կը տիրէր. նամակը ինձ յանձնած ժամանակ և ո՛չ անգամ ըսաւ՝ որ այս քու Տիրոջդ կամ Սրբազանին տուր. բայց միայն դէմքը տըխուր կերպով մը շարժելով ինձ հասկցուց։

Ս. ՆԵՐՍԷՍ

Գաւա՛ն, արդեօք զինքը բարկացնելու ա-ռիթ մը տուած ես։

ԳԱՒԱՆ

Ո՛չ, Տէր իմ, ամենեւին՝ մանաւանդ գիտէք թէ անոր սիրելի եմ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Միտքս ուրիշ կասկած մը կ'ինայ։

ԳԱՒԱՆ

Ի՞նչպէս։

Ս. ՆԵՐՍԷՍ

Հայաստանէն իրեն ուղղուած ուրիշ նամակ կա՞ր։

ԳԱՒԱՆ

Այո՛, ձեռքին մէջ ուրիշ նամակ մի ալ տեսայ բացուած։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ուրեմն ճիշդ է կասկածս, իրեն տրտմութեան պատճառ այս նամակը եղած պիտի ըլլայ. այս նամակը՝ որ վախնամ զիս ալ պիտի տրըտմեցընէ . . . .

Տէր Աստուած, ի՞նչ պիտի կարդամ արդեօք այս նամակին մէջ։ (Իսկոյն բանալով) Ա՜հ, սիրտս վրայ չ'երթար կարդալու . . . .

Ի՜նչ աղետալի լուրեր . . . ափսո՜ս . . . ա՜հ, ալ չ'եմ կրնար կարդալ, ալ չ'եմ կրնար ինքզինքս բռնել և չ'ողբալ Հայրենեացս աղիողորմ թըշուառութեանց վրայ։ Իմ աքսորանացս մէջ յիրաւի շատ դժբաղդութեանց պատահեցայ, ա-լեկոծութենէ նեղուեցայ, մահուան կէտը հասայ, օտար անծանօթ ու վայրենի գազաններով լեցուն երկրի մը մէջ թափառեցայ, անօթի՝ ծարաւ՝ անքուն եւ անօգնական մնացի, բայց ասոնք ամէնն ալ զիս այնչափ չ'վշտացուցին, որչափ որ Հայաստանի հիմակուան ողբալի վիճակը։

Ո՛վ դժբաղդ Հայրենիքս, այս կերպ պիտի լսէի ուրեմն քու վրայդ. այս օրինակ Հայրենատեաց զաւակներ պիտի ունենայիր՝ որ ըզքեզ կործանելու ու հիմնայատակ ընելու կը

ջանան։ Սիրտս կ'ողբայ՝ որ առաքինութիւնը նախանձու ակռաներու տակ կը ճնշի։

Հայաստան աշխարհ, կորսնցուցիր դուն ալ քու եռանդուն ոգիդ, ափսո՜ս։ (Ներսես կ'երկայ)

ԳԱՒԱՌ

(Երկայնը վրայ) Ի՞նչ նոր աղէտ արդեօք դարձեալ Հայաստանի մէջ։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ ԵՒ ԿՈՍՏԱՆԴ

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ո՞ւր կ'երթաս։

ԿՈՍՏԱՆԴ

Տէր իմ, Կայսեր հրամանը կատարելու։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ի՞նչ հրաման ունիս Կայսրէն։

ԿՈՍՏԱՆԴ

Պատուիրեր՝ որ մէկը չմտնէ իւր սենեակը։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ի՞նչ պատճառաւ։

ԿՈՍՏԱՆԴ

Տէր իմ, պատճառը չեմ գիտեր. միայն թէ ինձ ասանկ պատուիրեց, և ստիպուած եմ անոր հրամանը կատարելու։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ուրիշ մէկը կայ քովը։

ԿՈՍՏԱՆԴ

Առանձին է Տէր իմ, եւ առանձին կ'ուզէ մնալ ժամանակ մը։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Անշուշտ պատճառ մը ունի առանձին մնալու. բայց դուն կամ չես գիտեր պատճառը, և կամ չգիտնալ ձեւացընելու պատուիրուած ես։

ԿՈՍՏԱՆԴ

Ամենեւին Տէր իմ, միայն այսչափ տեղեկութիւն կրնամ տալ ձեզ՝ որ այսօրուան կրած կերպարանքը տխուր կ'երեւի։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ի՞նչ կ'ըսես, արդեօք ինչ առիթ ունի տրտմելու։

ԿՈՍՏԱՆԴ

Ինձ յայտնի չէ. բայց ներեցէք ինձ Տէր իմ,

եթէ կայսեր հրամանը 'ի գործ դնելու կ'ածապարեմ։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

(Ա-անչին) Ասիկայ ինձ զարմանք կը պատճառէ։ Տէրութիւնը բոլորովին խաղաղութեան մէջ կը գտնուի. նախարարաց և իշխանաց մէջ խռովութիւն մի չ'կայ, պալատին մէջ անդորրութիւնը կը տիրէ. ուրեմն ինչ պատճառ կրնայ ունենալ տրտմելու։

Պալատին մէջ անշուշտ մէկը կը գտնուի՝ որ կայսեր տրտմութեան պատճառը գիտնայ. ուրեմն ածապարեմ այս բանիս տեղեկանալու։

(Կ'երթայ)

ՏԵՄԱՐԱՆ Գ.

ԳԱՒԱՆ, ՎԵՐՋԷՆ ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ, ԵՒ ՎԵՐՋԷՆ ՊԱՊ, Ս. ՆԵՐՍԷՍ

ԳԱՒԱՆ

Գուժաբեր նամակ... քարէ սիրտ մը կ'ուզէ որ զայն կարդայ ու չ'հեծէ։ Արշակ, Հայրենատեաց Թագաւոր. ո՞ւր էր որ քու այդ զեղխ կեանքդ քիչ մը յառաջ վերջանար. հիմայ Հայաստան այս օրինակ դժբաղդութիւններ գուցէ չէր կրեր։ Ո՞ւր էր որ Հայաստան քեզի պէս բռնաւորի մը երեսը բնաւ չի տեսներ։

Դուն մեռար, բայց քու պատճառածդ անիրաւութիւնները կենդանի թողուցիր։ Ներկայացիր ուրեմն հիմայ այն ահարկու Թագաւորին առջեւ. ներկայացիր սարսափմամբ, ու գործած ոճիրներուդ՝ պատճառած խեղճութիւններուդ և անձնասպանութեանդ ցուցակը, համարը և հաշիւը տուր։

Երթամ Սրբազանը գտնեմ, նայիմ ինչ վիճակի մէջ կը գտնուի. իրաւունք ունի եղեր՝ որ այս աստիճան սիրտը ցաւեցաւ. և ո՞ր Աղգասէր այս աղէտները լսելով չի ճմլի...։

Խեղճ Հայաստան, բաղդակորոյս Տէրութիւն, ցաւալի աշխարհ, որ երբեմն պերճ ու բարեկարգ Թագաւորութիւն. կ'ողբամ ես ալ քեզի հետ քու թշուառութեանդ վրայ. կ'ողբամ, որ քու դեղեցիկ շէնքերովդ աւերակներու կայտ դարձած ես։ Ափսոս, ափսոս...։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

(Դրան առջեւ) Ի՞նչ ողբեր կը լսեմ, և ո՞վ է ան... (յառաջ գալով) Գաւան, Գաւան, դուն կուլա՞ս... դուն կ'ափսոսա՞ս, եւ ի՞նչ է այդ հեծութեանդ պատճառը. ո՞ւր է սուրբ Հայրապետը, ո՞հ, սիրտս կը տրոփէ. խօսէ՛ Գաւան, ի՞նչ է պատահածը։

ԳԱՒԱՆ

Ոչինչ տիկին։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Մի պահեր ինձմէ Գաւան, քու բերնէդ Հայաստանի անունը լսեցի, անոր վրայ կ'ողբաս դու. խօսէ՛ ուրեմն համարձակ, ի՞նչ է պատահածը, ի՞նչ է չարիքը՝ որու վրայ կը ցաւիս. ի՞նչ է աղէտը՝ որու վրայ կ'ուլաս. խօսէ՛ Գաւան, ի՞նչ է ցանկալի Հայրենեացս կորուստը։

ԳԱՒԱՆ

Իւր փառքը, իւր պայծառութիւնը և խաղաղութիւնը։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ո՛վ Երկինք, եւ ի՞նչպէս։

ԳԱՒԱՆ

Ներէ՛ ինձ Տիկին, ներէ՛ իմ լռութեանս՝ զոր զքեզ չըվշտացընելու համար կը պահեմ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ո՜հ, ո՜չ, յառա՛ջ տար. թէև տուած լուրդ դուժաբեր, թէև իմ աղիքներս կը խարշատէ, բայց պիտի լսեմ սիրելի Հայրենեացս վիճակը։

ԳԱՒԱՆ

Հայաստանի խաղաղութեան և սիրոյ արեւը մարեցաւ, Հայաստան հոգեվարքէ Տիկին...։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Հայաստան հոգեվարքէ՛... ի՞նչ եղաւ իւր Տէրութիւնը, ի՞նչ եղան Նախարարները, ի՞նչ եղաւ Արշակ՝ որ Հայաստան հեգեվարքէ պիտի ազատէ։

ԳԱՒԱՆ

Իւր Տէրութիւնը անգլուխ, Նախարարներէն ամէն մէկը իր անձը կը հոգայ, Արշակ Պարսից ձեռք անձնատուր ըլլալով ինքզինքը կ'ըսպաննէ Անյուշ բերդին մէջ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ինքզինքը կ'սպաննէ՛. Արշա՛կ, Անյո՛ւշ բերդին մէջ, ի՞նչ կը խօսիս Գաւան։

ԳԱՒԱՆ

Որովհետեւ զիս սարսափեցիր Տիկին, թո՛ղ ուրեմն գիտցածներս ալ խօսիմ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ո՛վ գթած Երկինք։ (Աչքերը կը գոցէ)

ԳԱՒԱՆ

Պարսիկք Հայրենատեաց Մերուժանայ սոսկալի անգթութեամբ ամէն տեղաց գունդագունդ Հայաստանի մէջ կը թափին... Հոն՝ ուր կենդանութիւն կը շողար, հիմայ մահը կը տիրէ.

ՀՍՍՌ-Արա ՍՍՌ

հոն՝ ուր ժպիտ և ուրախութիւն սովոր էր փայլիլ հիմայ լաց և վայնասունք ամէն տեղաց արձագանք կ'ուտան. սուրը իւր գլխուն վրայ, աբիւնը իւր ոտքերուն տակ, եւ տոչորակէզ հուրը իմ ցանկալի Հայրենիքս անապատ կը դարձընէ. ով Թշուառութեանս ...։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Լռէ՛ Գաւան, լռէ՛... բայց ուսկից իմացար դու, ով բերաւ այս գուժաբեր լուրը։

ԳԱՒԱՆ

Հայաստանէն երկու նամակներ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Որո՞ւ ուղղուած.

ԳԱՒԱՆ

Կայսեր եւ Սրբազանին։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ուրեմն Սրբազանը լսե՞ց այս աղէտը։

ԳԱՒԱՆ

Այո՛ Տիկին, հազիւ հազ կրցաւ կարդալ նամակը, եւ տրտմութենէ ու կսկիծէն իւր սենեակը առանձնացաւ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ո՛վ Թշուառութիւն, պանդխտութեան մէջ աւելի ասստկութեամբ կը հասնիս, և մահուան զանգակի նման մարդուս սրտին խորը կը զարնես...։ Եկուր Գաւան, տար զիս Սրբազանին քով. մխիթարենք զինքը, ըսենք որ ծերութեան մէջ այսպիսի դառն կսկիծ մը իւր առողջութեանը սպառնայ։ Երկնից գթութեանը ապաւինինք՝ որ Թշուառաց միակ պաշտպանն է, երթանք։

ԳԱՒԱՆ

Բայց կարծեմ Սրբազանը հոս կ'ուգայ, առնոր ոտքին ձայնը կը լսեմ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Այո՛ այն է, նաեւ Պապ անոր հետ, բայց ինչ տրտում և տխուր։

(Պապ և Ներսէս կը մտնեն։)

ՊԱՊ

Այս տարաբաղդ լուրը իմ արիւնս սառեցուց Սրբազան Հայր։

Ս. ՆԵՐՍԷՍ

Եւ Հայրենեաց արիւնը հոսեցուց։

ՊԱՊ

Զարմանդուխտ, Արշակ հայրս . . .։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ինքզինքը կ'սպանեմ։

ԳԱՒԱՌ

(Հայրենեաց անդորրութիւնն ալ մէկտեղ։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Ահա անձնասիրութեան եւ ատելութեան պտուղը, որ աշխարհ մը կրնայ կործանել եւ ժողովուրդ մը աւերակներու վրայ թողուլ . . . բայց Հայաստանի՞ մէջ այս երկուքն ալ. Հայաստան ասոնց զո՞հ ըլլայ, եւ իւր փառքը, պայծառութիւնը եւ խաղաղութիւնը նսեմացընէ եւ վրդովէ։ Ա՛հ ո՛չ, ո՛չ քաղցրիկ Հայաստան, ո՛չ նուիրական տեղի, դուն այսպիսի ցաւալի վիճակի մը ենթակայ պէտք չ'ես ըլլալ։ Հայրենատեաց Մերուժան մը թէպէտ քու Վանքերդ եւ Եկեղեցիներդ հիմնայատակ կը կործանէ, թէեւ քու թշուառ բնակիչներդ կը հալածուին եւ կը ջարդուին, բայց Աստուած մը, երկրպագելի Ստեղծող մը զքեզ անօգնական չի թողուր։ Այն կրակը՝ որ զքեզ կը լափէ հիմայ, կարող է մարել եւ նոյն իսկ Մերուժանայ արեամբ . . .։

Իսկ դուք մի՛ տրտմիք զաւակներս, Երկնից վրայ դնենք մեր յոյսը. թէեւ յոյս եւ ակնկալութիւն Հայաստանի տխուր աւերակներուն տակ կը ծածկուին հիմայ։

ՊԱՊ

Երթանք Սրբազան Հայր, ժամանակ է՝ որ Ձեր հաղուագիւտ հանճարոյն շտեմարանը բանանք. ժամանակ է՝ որ Ձեր տաղանդաշատ բնաւորութեամբ այս աղէտներուն դարման մը տանիք։ Ես կ'ուզեմ Հայաստան դառնալ. ամէն մէկ վայրկեան հոս իմ կեանքս կը մաշեցընէ։ Թէեւ իմ բաղձկներս արիւն տեսած չ'են, թէեւ պատերազմի պողպատը տակաւին իմ աչքիս առջեւ շլացած չ'ունի, բայց սիրտս վառ է միշտ Հայրենեաց սիրով. սիրտս եւ բաղձկներս պատրաստ են միշտ նուիրիլ Հայրենեացս օգտին համար . . .։ Պիտի լուծեմ քու թշուառ եւ անարդ մահուանդ վրէժը, Հա՛յր իմ Արշակ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Հանդարտէ՛ Պապ, սիրելի՛ ամուսին, մի՛ խռովիր։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այո՛, պիտի դառնաս Հայաստան, վրէժխնդիր պէտք ես ըլլալ քու թագաւոր Հօրդ

մահուանը. բայց աւելի շատ Հայրենեացդ վը-
նասուն։ Որովհետեւ Արշակ հօրդ մահը Հայ-
րենեացդ օգտին համար չէր բնաւ. իւր ան-
կարգ ընթացքը, իւր գէշ վարմունքն էր որ
Հայաստանի խաղաղութիւնը՝ և շատ կեանքե-
րու հետ մէկտեղ իւր կեանքն ալ կորսնցուց։

ԳԱՒԱՆ

(Կամսարականաց և Գնելայ և ուրիշ ան-
մեղներու արիւնը թափել տուաւ Արշակ։)

ՊԱՊ

Բայց Արշակ հայրս . . . .

Ս. ՆԵՐՍԷՍ

Սպասէ՛ Պապ, ասանկ նեղ ատենի մը մէջ
և ասանկ կարեւոր գործ մը զայրութով չ'սկը-
սինք, այլ խոհեմութեամբ։ Ես կ'երթամ կայ-
սեր ներկայանալու. անոր գութը շարժելու
պիտի աշխատիմ, անոր օգնութիւնը պիտի
խնդրեմ, որպէս զի Արշակ հօրդ տեղ զքեզ
Հայոց վրայ թագաւորեցնէ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Թագաւո՞ր Հայոց վրայ, ո՞հ ինչ ուրախու-
թիւն։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այո՛, թագաւոր Հայոց վրայ, բայց ո՛չ իբր

Արշակ. այս միայն յիշէ Պապ, աւելի աղէկ է
աղքատ և խոնարհ աստիճանի մէջ՝ քան իբրեւ
Արշակ թագաւոր ըլլալ։ Բայց երթանք, սիրտս
լցուած է, և Հայրենեացս վիճակը ժամանակ
կորսնցընելու չը ներեր։

ԳԱՒԱՆ

(Բարի վարքը և բարի անունը՝ երկրիս վրայ
ամենէն մեծ թագաւորութիւնն է։)

ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԸ ԳՈՅՈՒԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԿԱՑՈՐ, ՆԵՐՍԷՍ, ԿՈՍՏԱՆԴ, ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ, ՊԱՊ։

ԿԱՑՈՐ

Յիրաւի սիրտս շատ ցաւեցաւ Հայաստանի Թշուառ կացութեանը վրայ, եւ կրնամ ըսել թէ իմ տրտմութիւնս ալ ձերինին կը հաւասարի։

Ս. ՆԵՐՍԷՍ

Անդուգական ոգւոյ հաւատքներ են ասոնք ով մեծավառ Տէր. չեմ կրնար Հայրենեացս մէջ գտնուող անձնասէր մարդկան թիւը պակսեցընել. քանի որ ըրած գործքերնին յայտնի կը վկայեն։

Ափսոս, որ Հայաստան այսպիսի հայրենասէրաց անձերու զոհ կ'ըլլայ. ծերութեանս մէջ այս ամենէն մեծ վիշտը պիտի ըլլայ եղեր, որ իբր անյագ ցեց իմ կեանքս մաշեցընէ . . . ։ Ներէ՛ արտասուացս ո՛ խաղաղասէր Իշխանդ, որոնք Հայրենասէր աչքերէ կը բղխին։

ԿԱՅՍՐ

Հանդարտեցէք ո՛ Սրբազան Հայր. տրրտմութեան և վիշտերու մէջ չը յուսահատիլը ես ձեզմէ պէտք եմ սորվիլ. տեղն տուէք այդ տրտմութեան՝ որ թէպէտ եւ արդարացի է, բայց ալեւորեալ հասակնուդ վեհասակար։ Քաջալերուեցէք, գթասիրտ ոգիներ տակաւին կը գտնուին... Հանդարտեցէք կ'ըսեմ, տրրտմութեան ախտը փոխադրական է, որուն աղդեցութիւնը ես ալ կ'զգամ։ Շատ անգամ Ձեր ազդու խօսքերը լսած եմ, որոնք տրրտմութեան ու ցաւոց համբերութեամբ տանելու համար՝ ազդու քաջալերներ էին։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ձեր վեհափառութեան անզուգական սիրտն է՝ որ կ'ստիպէ զՁեզ այս կերպիւ նուաստիս հետ վարուելու. բայց արդ՝ խօսեցէք ինձ, ինչպէս չը տրտմիմ՝ որ Հայրենիքս անդունդէ անդունդ գահավիժելու կէտը հասած է. ինչպէս չը տրտմիմ ու չը ցաւիմ։ Դատեցէք ուրեմն և ես կը հնազանդիմ Ձեր տուած իրաւանցը։

Ես ճարտարախօսութիւն չունիմ, բնական հանճար ամենեւին, հապա սրտէս ելած խօսքերն են՝ որ անկեղծութեամբ կը խօսիմ։ Ձեր աղնիւ սիրտը գրաւելու ու շարժելու համար

կարող չեմ պերճ ու զարդարուն խօսքերով առենաբանութիւններ ընել. բայց միայն Ձեր վեհափառութեան աչքին առջեւ կը ներկայացնեմ Հայաստանի շինուածոց ու պալատներուն տխուր աւերակները։ Դարձուցէք անգամ մը Ձեր քաղցր ու բարեգութ հայեցուածքը հոգեվարք Հայաստանի վրայ, որուն մթնոլորտը կարմիրանգ արեան գոյն առած է. ասոնք Ձեզ կը ներկայացնեմ, այս կերպիւ կը խօսիմ, որ ո՛չ չափազանցութեամբ է եւ ո՛չ բնական հանճարով։

Պարսիկք իրենց անգութ սուրերով ամէն տեղ կ'աւրեն ու անապատ կը դարձնեն. Վանքերը ու Եկեղեցիները հիմնայատակ ըրած են, ու մէջի եղած բոլոր արարողութեան Յունարէն գիրքերը Մերուժանայ ձեռքով այրած, կրօնքը մեծ վտանգի մէջ է ո՛ մեծափառ Տէր։ Հրապաշտից եւ արեւապաշտից մեհեանները օրէ օր կը շատնան. անթիւ անձեր Քրիստոնէութեան համար կը զոհուին, եւ Հայաստանի մէջ մէկը չը կայ՝ որ այս ամենուն դարման տանի. ո՛չ Թագաւոր, ո՛չ Նախարար և ո՛չ Ժողովուրդ. ամէն մէկը մէկ մէկ կողմ ցրուած են։ Արշակ Թագաւորը Պարսից ձեռքը անձնատուր ըլլալով, Անյուշ բերդին մէջ ինքզինքը կ'սպաննէ. Նախարարներէն ոմանք Պարսից կողմը կ'անցնին, և ոմանք ուրիշ ամրութիւններու մէջ կ'ապաստանին. Ժողովուրդը անօ-

ըէն ձեռքերէ կը զոհուի։ Ո՜հ, այս ամէնը մեռալուտ կործանման մը նախագուշակութիւններն են։

Կարծես թէ Հայաստանի աւերակներէն ալ կը կանչեն, ինձմէ օգնութիւն կը խնդրեն։ Ո՜վ իմ դժբաղդ Հայրենիքս, և դուք տառապեալ զաւակներս. ինչպէս կրնամ ձեզի օգնել, քանի որ ես ինքնս օգնութեան կարօտ եմ։ Մի՛ հեծէք, մի՛ հառաչէք, Աստուած իր արարածները երեսէ չը ձգեր. բայց աւելի աղէկ կ'ընէք՝ որ ալս օգնութեան կանչելնուդ տեղ, Նորին վեհափառութեան օգնութիւնը խընդրէք։ Խնդրեցէ՛ք և չը զլանար, աղաչեցէ՛ք ու անոր բարեգութ սիրտը կը զինջանի. Նախախնամութենէ եռքը ձեր երկրորդ ապաւէնը անիկայ է. ցուցուցէ՛ք անոր ձեր կիսաբաց վէրքերը, վերուցէ՛ք գլուխնիդ փլատակներուն տակէն, և ձեր նուազ ու անզօր հառաչանքը և հեծութիւնը . . . ։

ԿԱՑՍՐ

(Ընդդիմելով) Բաւական է, բաւական է . . . . . ։

(Քիչ մը ժամանակ երկուքնին ալ աչքերնին կը գոցեն։)

ԿԱՑՍՐ

Ի՞նչպէս այս թշուառութեանց դարման կրնայ տարուիլ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Իմ մի միայն բաղձանքս այս է, և ասով գալիք չարութեանց առջեւը կրնայ առնուիլ, որ Արշակայ որդին Պապը Հայոց վրայ թագաւոր կարգելու շնորհք ընէք։

ԿԱՑՍՐ

Որովհետեւ այսպէս կ'ուզէք, կատարուի Ձեր բաղձանքը. բայց յիշեցէ՛ք որ Արշակայ որդին է։

Ս. ՆԵՐՍԷՍ

(Ո՜վ Երկինք, այս իսկ է որ իմ բոլոր մտադրութիւնս կը գրաւէ։

(Կոսպանդ կը մտնէ։)

ԿԱՑՍՐ

Շուտով Տերենտիանոս զօրավարը ինձ խրկէ։

(Կոսպանդ կը մեկնի։)

Ահնոգ եղիք Սրբազան Հայր, քիչ ժամանակէն ամէն բան կարգի կը մտնէ, եւ ձեր տրտմութիւնները ուրախութեան կը փոխադրուին. և ես կը փափաքիմ միշտ որ զՁեզ ուրախութեան վիճակի մէջ տեսնեմ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այդ փափաքը գործքով ալ ցոյց տուէք վեհափառ Տէր։

ԿԱՑՍՐ

Եւ ասով իմ պարտքս կատարեցի եւ ոչ ուրիշ բան մը։

(Տերենտիանոս կը մնէ։)

ԿԱՑՍՐ

Տերենտիանոս զօրավար։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Տէր իմ։

ԿԱՑՍՐ

Անմիջական զօրութիւն մը կ'ուզեմ քեզմէ։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ձեր բարձր հրամանը կատարելու պատրաստ եմ միշտ, վեհափառ Տէր։

ԿԱՑՍՐ

Շուտ մը բաւական ուժով Աբշակայ որդին Պապը հետդ առած՝ Հայաստան երթաս, ու զայն թագաւորեցընես բոլոր Հայոց վրայ. անկէց վերջը թշնամին բոլորովին վանես Հայաստանի սահմաններէն, և ամէն բան կարգի դնես յաջողութեամբ. պիտի կրնաս ասոնք ընել։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Վեհափառ Տէր, այդ ըսածնիդ ընելու համար՝ մի միայն Ձեր հրամանը և Նախախնամութեան օգնութիւնը կը պակսի։

ԿԱՑՍՐ

Իմ հրամանս արդէն ստացար, և Նախախնամութեան օգնութիւնն ալ սուրբ Հայրապետին աղօթիւքը կրնաս ստանալ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այո՛, իմ սրտանուէր աղօթիցս, իմ արտասուախառն աղաչանացս յուսամ կը լսէ Երկինք, եւ կը շնորհէ իւր օգնութեան ձեռքը քաջաբազուկ զօրապետի մը՝ որ թշնամացեալ ժողովուրդ մը և երկիր մը աղատելու կը դիմէ։

ԿԱՑՍՐ

Անտարակոյս եմ։ Տերենտիանոս զօրավար։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Տէր իմ։

ԿԱՑՍՐ

Պապը ինձ խրկէ։

(Տերենտիանոս կը մեկնի։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Անփոխարինելի են ինձ, մանաւանդ Հայրենեացս ցոյց տուած մարդասիրութիւնդ, ով գթառատ Իշխանդ. Հայաստան աշխարհը՝ որ բարձր ապառաժի մը մինչեւ ծայրը հասած, երեն առջեւի կորստեան խորափոր ու անելանելի անդունդին մէջ գահավիժելու կը մօտի,

դուք օգնութեան ձեռք կը կարկառէք եւ կը պաշտպանէք զայն գիշատիչ առիւծներու կատաղութենէ։ Ո՛վ անվոխարինելի երախտեացս. ես չեմ կրնար ըստ արժանւոյն երախտապարտ սրտիս անկեղծ զգացմունքը յայտնել։ Թող Հայրենեացս տխուր աւերակները արեգական ճառագայթներէն զուարթանան, և նոր Հռոմմայ ու անոր մարդասէր Ինքնակալին առջեւ շնորհապարտութեան ստուերներ տարածեն։ Թող Հայաստանի թշուառացեալ վեհասերունդ ժողովուրդը՝ զուարթ դէմքով իբրեւ յայտնի և արտաքին հաւաստիք, իւր արտասուաթոր աչքերէն երախտապարտութեան կաթիլներ հոսեցընէ։

ԿԱՑՍՐ

Թող Հայաստան այդ՝ երախտապարտութեան նշանները արժանաւոր մէկու մը յայտնէ։ Բարիք գործելը մարդուս պարտաւորութիւնն է, Սրբազան Հայր. եթէ ասիկայ ալ բարիք կրնայ սեպուիլ, իմ մեծ ուրախութիւնս այն է՝ որ երախտիք ճանչցող Ազգի մը կ'ընեմ։ Ձեր բոլոր առաջարկութիւնները՝ որոնք Հայրենեացդ օգտակար էին, ընդունեցի. մի միայն Հայաստանի սիրոյն, և Ձեր վրայ ունեցած համարմանս համար. բայց և ես առաջարկութիւն մի ունիմ ընելիք, և չեմ ուզեր որ և ոչ մէկ կերպիւ ընդդիմանաք։

Ս. ՆԵՐՍԷՍ

Կ'ընդունիմ, երբ Ձեր վեհափառութիւնը կ'առաջարկէ, և Հայրենեացս վնասակար չէ։

ԿԱՑՍՐ

Առ ժամս Հայրենեացդ օգտակար իսկ է։

Ս. ՆԵՐՍԷՍ

Երբ օգտակար՝ ընդունիլ իմ պարտքս է։

ԿԱՑՍՐ

Դուք ամէնքդ ալ կրնաք Հայաստան երթալ, Նոյնպէս և Պապ՝ իբրեւ թագաւոր Հայոց վրայ։ Ես այս բանիս համար ինչ օգնութիւն որ իմ ձեռքովս կրնայ ելլալ, արդէն Ձեզի կը նուիրեմ. բայց Պապայ ընտանիքը չեմ թողուր որ ձեր հետ Հայաստան դառնայ. այլ պիտի պահեմ հոս իբրեւ պատանդ՝ թագաւորական ընտանիքի արժանի եղած պատուով։

Ս. ՆԵՐՍԷՍ

Հաճէ՛ վեհափառ Տէր, ամբողջ ուրախութիւն մը երկուքի չը բաժնել։

ԿԱՑՍՐ

Որովհետեւ առաջին անգամուն ծանր կ'երեւի Ձեզ այս առաջարկութիւնը, և կ'ուզէք ընդդիմանալ անոր, ուստի իմ պատճառներս

յայտնեմ՝ որով Դուք ալ համոզուիք։ Արշակայ բռնած ընթացքը դիս կը վախցընէ որ դէշ օրինակ մը ձգած չ՚ըլլայ իւր եռանդոտ տղուն. ուստի պէտք է ասանկ պարագայի մէջ մտածմունք մը թողուլ անոր հետ, եւ սահման մը դնել անոր առջեւ, ուսկից անցնելու ատեն մտածէ միշտ՝ թէ իւր ընտանիքը պատանդ է իմ քովս։ Իբր երաշխաւորութիւն մը իւր թագաւորութեան, իւր ընտանիքը իմ պալատիս մէջ պիտի պահեմ։ Ահաւասիկ ինքն ալ կ՚ուգայ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Յարմար ատեն։

(Պապ կը մտնէ։)

ԿԱՑՍՐ

Հայրենեացդ թշուառ վիճակին անշուշտ տեղեակ ես։

ՊԱՊ

Այո՛ վեհափառ Տէր, և սիրտս վերջին աստիճան կը ցաւի մանաւանդ հօրս ունեցած անկարգ ընթացքին վրայ։

ԿԱՑՍՐ

Մենք հիմայ կը խորհինք այս չարեաց դարման մը տանիլ, զքեզ Աղդիդ վրայ թագաւորեցընելով, եթէ Արշակ հօրդ ընթացքը չը-բռնելու խօսք կ՚ուտաս։

ՊԱՊ

Վեհափառ Տէր, քանի որ թագաւոր հօրս ընթացքը Հայաստանի այսչափ աղէտ պատճառեց, մանաւանդ թէ ինձ ալ անհաճոյ է, ինչպէս կրնամ ասանկ աղիտաբեր ճամբու մէջ ես ալ քալել։

ԿԱՑՍՐ

Ուրեմն խօսք կ՚ուտամս որ քու մինչեւ վերջին կէտդ Հայրենեացդ բարեկամութեան հոգատանիս, ու Աստուծոյ եւ մարդկան հաճելի ընթացք մը բռնես։

ՊԱՊ

Ի բոլոր սրտէ վեհափառ Տէր, մանաւանդ թէ անհրաժեշտ պարտաւորութիւնս է։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ընդունէ՛ իմ ալ երաշխաւորութիւնս Տէր իմ։

ԿԱՑՍՐ

Այո՛, կ՚ընդունիմ սիրով, բայց այն առաջարկութեամբ՝ ինչ որ քիչ մը յառաջ Ձեզ ըսի։ Թէ քու ընտանիքդ Պոպ, իմ քովս պատանդ պիտի պահեմ. մինչեւ որ Տերենտիանոս զօրավարը դառնայ Հայաստանէն, և Հայաստան բարեկարգ ու խաղաղ վիճակի մէջ մտնէ։

ՊԱՊ

Ներէ՛ ինձ վեհափառ Տէր, եթէ կը համարձակիմ հարցնելու թէ արդեօք իմ ընտանեացս ներկայութիւնը Հայաստանի բարեկարգութեան և խաղաղութեան արգելք պիտի ըլլայ։

ԿԱՑՍՐ

Այդ ըսել չեմ ուզեր։

ՊԱՊ

Ուրեմն ինչպէս Հայաստան դառնամ առանց ընտանիքս ալ հետս տանելու։ Հայր մը ունէի հոն, վեհափառ Տէր, Թագաւոր հայր մը, և կորսնցուցի զայն, և ինձ հիմայ միակ միխիթարանք՝ ընտանիքս է։

ԿԱՑՍՐ

Հայր մը ունէիր հոն այո, Թագաւոր հայր մը, և կորսնցուցիր զայն. բայց հայր մը՝ որ իր Տէրութիւնը կառավարել չգիտցաւ. հայր մը՝ որ իր Թագաւորութեան հետ մէկտեղ իր կեանքը եւ երկրին հանգստութիւնը կորսընցուց։ Ուստի և քեզ միակ միխիթարանք հիմայ Պապ, Հայրենիքդ երջանիկ և խաղաղ վիճակի մէջ տեսնելն է։

Բարեկարգէ՛ զայն և ամէն կերպիւ. թող խաղաղութիւնը եւ հանգստութիւնը տիրէ

Հայաստանի մէջ, եւ ընտանիքդ անմիջապէս քովդ պիտի գտնես։ Ա՛յս է իմ փափաքս, եւ այս բանիս համար է որ զքեզ Հայրենեացդ վրայ կը թագաւորեցընեմ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այո՛ վեհափառ Տէր, Հայրենեաց օգուտը չը ներեր իրեն՝ որ Ձեր առաջարկութիւնը մերժէ. այնպէս չէ՞ Պապ։

ՊԱՊ

Քանի՞ որ այնպէս կը տնօրինէք....։

ԿԱՑՍՐ

Ուրեմն իմ բոլոր օգնութիւնս Ձեր հետն է։ (Ոտի վրայ ելնելով) Երթանք ամէն բան կարգադրելու, եւ քիչ մը վերջը մեծ բանակով ճամբայ կ՚ելնէք։

(Կ՚երթայ։)

Ս. ՆԵՐՍԷՍ

(Երկուքով) Մխիթարուէ՛ անգութ ձեռքերէ հարուածեալ Հայաստան։

ՊԱՊ

Մխիթարուէ՛ և դուն Պապ, եթէ կրնաս հայրդ եւ ընտանիքդ կորսնցընելով մխիթարուիլ.....։

Եւ ինչո՞ւ Արշակ հօրս ընթացքը ես ալ անկարգ խոստովանեցայ. միթէ պատերազմի վիճակը փոփոխելի չէ՞ միշտ. միթէ յաղթութիւնը շարունակ մէկ անձի վրա՞ կ'իջնէ։ Ո՜հ, ո՛չ հայր իմ, եթէ այս անգամ բաղդը քու վրադ խոժոռ նայեցաւ, ես պիտի հեռացընեմ անոր երեսի կնճիռը, և պիտի ցուցուցնեմ բոլորը աշխարհի, նաեւ հոս իմ ընտանիքս արգիլող կայսեր իսկ՝ որ Դու զաւակ մը թողուցիր ղ.քեզ մտածող և.քու վրէժդ լուծող։

(Երիտասարդ Զարմանդուխտը կը դեռնէ և դէպ կը դառնայ։)

Ո՛վ բաժանմունք, Զարմանդուխտ կ'ուզայ։ Ա՜հ, ի՞նչպէս պիտի կրնամ բաժնուիլ... զաւակներս... արիութիւն տուր իմ սրտիս, ով երկինք....։

(Զարմանդուխտ և որդին Արշակը կը մոտենան։)

ԱՐՇԱԿ

Հայաստա՜ն... (հօրը ոտքին վրայ վազելով) Հայրենիք պիտի երթանք հայր իմ։

ՊԱՊ

Ի՜նչ անոյշ ձայն, ինչ փարելի հնչում։
(Կը նստի ծունկին վրայ Արշակ որդը առնելով, և աչքերը կը գոցէ։)

ԱՐՇԱԿ

Դուն կ'ուլա՞ս հայր իմ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Դեռ իւր հայրը կը մտածէ, դեռ Արշակայ մահուանը վրայ կը հեծէ։

Ելիր Պապ, ելիր իմ թագաւոր Տէրս. եթէ Արշակ հայրդ մեռաւ, զքեզ Հայոց վրայ թագաւոր թողուց։ Ելիր, այսպիսի երջանկութիւն մը տրտմութեամբ մի՛ շնորհաւորեր։ Ուրախացիր Տէր իմ, Հայաստան պիտի դառնանք։

ԱՐՇԱԿ

Այո՛ հայր, երթանք մեր հայրենիքը։

ՊԱՊ

Երկինք, ի՞նչպէս գուժեմ։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Բայց ըսէ՛ Պապ, ի՞նչ է քեզ տրտմեցնողը։

ՊԱՊ

Ձեր կորո՛ւստը։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Մեր կորո՛ւստը։

ԱՐՇԱԿ

Հայր իմ։

ՊԱՊ

Սիրելի Արշակս, այդ քաղցր հնչումը ալ այս ականջներս պիտի չը լսեն։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Բայց ինչ կը խօսիս Տէր իմ, ինչո՞ւ ասանկ երջանկութիւն մը տրտմութեամբ կը լեցընես։

ՊԱՊ

(Ոտի վրայ ելնելով) Երջանկութիւն, ո՛չ Զարմանդուխտ, թշուառութիւն ըսէ։ Անգութ Կայսրը չը թողուր որ զձեզ իմ հետս Հայաստան տանիմ . . .։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Հապա ինչ պիտի ըլլամ ես, ինչ պիտի ըլլան զաւակներս՝ Արշակն ու Վաղարշակը։

ՊԱՊ

Պատանդ պիտի կենաք Կայսեր քով։

ԱՐՇԱԿ

Ո՛չ, Հայր իմ մեզի մի՛ թողուր։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Ո՛վ Թունալից ուրախութիւն . . .։

(Ս. Ներսէս կը մտնէ։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Քաջալերուէ Պապ, Հայրենեացդ վիճակը քեզմէ կախում ունի։

ՊԱՊ

Եւ իմ վիճակս . . .։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Աղաչեցէք Սրբազան Հայր, աղաչեցէք Կայսրը՝ որ թողու մեզ ալ Հայաստան երթալու։

Ս. ՆԵՐՍԷՍ

Զարմանդուխտ, Տէրութեան գործերը քեզ ծանօթ չեն. որչափ որ դժուար և անտանելի է այս բաժանումը, բայց միանգամայն իբրեւ Թագուհի եւ պատուով պիտի կենաք քիչ մը ատեն այս պալատին մէջ։ Այս ալ գիտցիր որ այս բաժանումը Հայրենեաց օգտին կը նպաստէ, Նոյնպէս և Պապայ։

ՊԱՊ

Նոյնպէս և երկուքին ալ վնասուն։

Ս. ՆԵՐՍԷՍ

Աղէ Պապ, պէտք է Հայ Թագաւորի մը այդպէս Թուլասիրտ ըլլալ։ Ես որ զքեզ Թագաւորեցընելու աշխատեցայ. ես դարձեալ կը

խոստանամ քու ընտանիքդ քիչ ատենէն Հայաստան դարձընել, երբ ամէն բան խաղաղի։

Եւ միթէ ապահովի կը կարծես դուն, պատերազմի վտանգաւոր դաշտին վրայ ընտանեացդ դեգերիլը։ Հայրենեաց ստոյգ օգուտը, և մանաւորի անստոյգ օգուտը քու առջեւդ կը ներկայացընեմ. խօսէ՛ Պապ, որո՞ւ կ'ուզես հետեւիլ։

ՊԱՊ

Հայրենեաց օգտին կը զիջանիմ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ճշմարիտ Հայ թագաւորի մը պարտքը կատարեցիր։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Թո՛ղ ուրեմն Հայրենեաց սէրը յաղթէ ընտանեաց սիրոյն. եւ ես յետոյ կ'ուզամ տէր իմ, Հայաստանի մէջ յաղթութեան կամարէն անցնիլդ տեսնելու։

ՊԱՊ

Մնաս բարեաւ Զարմանդուխտ, արժանի Հայոց վրայ թագուհի մը ըլլալու։

ԶԱՐՄԱՆԴՈՒԽՏ

Երթաս բարեաւ սիրելի՛դ իմ Պապ. ջանա արժանաւորապէս Հայրենեաց վրայ իշխելու։

Ս. ՆԵՐՍԷՍ

Երթանք։ Ողջամբ մնա՛ Զարմանդուխտ։

ԱՐՇԱԿ

Ո՞ւր կ'երթաս, Հա՛յր իմ.....։

ՊԱՊ

Ա՜հ, սիրելի Արշակս, համբոյր մը, համբոյր մը քու չքնաղ այտերէդ։

Ես Հայրենեացս համար պատերազմելու կ'երթամ. մեծցի՛ր դուն ալ Հայ արիւնով, եւ ծերութեանս մէջ իմ նեցուկս եղի՛ր Հայրենիքդ պաշտպանելու. քեզմէ կը բաժնուիմ սիրելի՛ Արշակս, եւ կ'երթամ Հայաստանի օգուտը գրկելու։

ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԸ ԳՈՅՈՒԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Ս. ՆԵՐՍԷՍ, ՊԱՊ, ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ,
ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ,
ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ,
ԿՈՍՏԱՆԴ, ՎԱՂԱՐՇ ԿԸ ՄՊՆԻՆ։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Կոստանդ։

ԿՈՍՏԱՆԴ

Տէր իմ։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Զօրքերուն հրաման տուր քիչ մը հանգչելու, և դուն Թշնամեաց կողմերը լրտեսէ։

(Կոստանդ կը մեկնի։)

Եկէք Տէր իմ, և դուք Սրբազան Հայր, եկէք այս ժայռերուս վրայ հանգչինք, մինչեւ որ Կոստանդ Թշնամեաց կողմէն մեզի տեղեկութիւն բերէ։

ՊԱՊ

Ամբան Բագրատունի, իմ քաջ զօրապետս, և դուն հաստաբազուկ Մուշեղ, Հայաստանի բաղդը այսօր ձեր ձեռքին մէջ պիտի փորձուի։

ՍՄԲԱՏ

Եւ ձեր թագաւորական գլուխը պիտի իջնէ, տէր իմ։

ՄՈՒՇԵՂ

Եւ Հայաստանի վրայ պիտի հանդչի։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այո՛, Հայաստանի վրայ, ուր անոր կնճիռը տակաւին դրոշմուած է. Հայաստանի՛ վրայ՝ որուն աւերակները իմ սիրտս խոցեցին. սա՛ ուեցա՛ւ իմ արիւնս, որովհետեւ զայն կենդանի թողուցի. բաղմամարդ էր այն և ոչ ամայի, շէն և բարեկարգ էր, երբ իրմէ բաժնուեցայ։ Ա՜հ, անօրէն Մերուժան։

ՍՄԲԱՏ

Անարժան Հայ անուան։

ՄՈՒՇԵՂ

Մատնիչ Հայրենեաց։

ՊԱՊ

Անողորմ ճիւաղ, վայրենի գազան։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Եւ իբրեւ գազան կը կործանի՝ անշուշտ այսօր այս դաշտիս վրայ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Մեծ է երկնից կարողութիւնը . . .։

ՊԱՊ

Ա՜հ, թէ զինքը գետին փռուած տեսնէի, վերջին շունչը հանէր իւր բերանէ, դթութիւն խնդրէր օձի նման սողալով, և վերջին մահատու հարուածը իջեցընէի անոր անիծեալ գլխուն։

(Կոսպանդ կը մտնէ։)

ԿՈՍՏԱՆԴ

Թշնամեաց բանակը այս բլրակին ստորոտը կը գտնուի. Մերուժան զօրքերուն գլուխը անցած է և յառաջ կը վարէ զանոնք։

ՊԱՊ

Պատերազմի նշանը տուէք, զօրքերը պատրաստուին։

(Վաղարշ կը մտնէ։)

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Հրաման տուէք պատերազմի փողը հնչելու։

(Կոսպանդ կը մտնէ։)

ՊԱՊ

Քաջդ Սմբատ, դուն քու բանակովդ իմ աչ կողմն միշտ գտնուէ։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ի՞նչ կ'ըսէք Տէր իմ, անկարելի է որ բանակին մէջ մտնէք։

ՊԱՊ

Եւ ինչո՞ւ։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ձեր կենաց ապահովութեան համար։

ՍՄԲԱՏ

(Մուղեղին) Զբաղուինք որ Թագաւորը պատերազմի մէջ մտնէ։

ՄՈՒՇԵՂ

Այո՛, պէտք չէ՛ մտնել։

ՊԱՊ

Մինթէ նախատի՞նք է ինձ, ինչ ատեն այս կեանքս՝ զոր Հայրենեացս պարտական եմ, անոր բարութեանը համար զոհելու ըլլամ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Թագաւոր Տէր, Հայրենիքդ քու կենացդ

աւելի շատ պէտք ունի հիմայ. և զայն պէտք ես ապահովցընել, եթէ Հայրենիքդ կը սիրես։

ՍՄԲԱՏ

Վեհափառ Տէր, մեր բոլոր էութիւնը Ձեզ համար դրած ենք։

ՄՈՒՇԵՂ

Մեր բաղուկները թշնամին վանելու պիտի չ'ուշանան։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Հաւանէ՛ մեզի արիասիրտ Տէր։

ՊԱՊ

Բայց ի՞նչ բանի համար Կայսրը զիս Թագաւոր ըրաւ. անոր փառքը և հանգստութիւնը վայելելո՞ւ միայն, երբէք. հապա պէտք եղած ժամանակ պատերազմիլ զօրաց հետ մէկտեղ, ու նաեւ արիւն թափել Հայրենեաց համար։

Ահաւասիկ յարմար ժամանակ. իմ աներկիւղ բաղուկներուս ոյժը պիտի փորձեմ։ Այնչափ երկչոտ մի՞ կարծէք Հայոց Թագաւորը՝ որ մահուանէ վախնայ։

(Պապերոյնի գոռը կը հնչուի։)

Ա՛ղէ ուրեմն, ժամանակ չը կորսնցընենք. . . . .

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Քաջդ, տպասեցէք վայրկեան մը, կ'աղաչեմ։ Մենք ամենքս ալ սրտով Ձեզի համար պատերազմելու եկած ենք։ Եթէ պատերազմին մէջ դժբաղդաբար Ձեզի փորձանք մը պատահի, ես ի՞նչպէս Կայսեր առջեւ ներկայանամ. ասով իմ կեանքս ալ վտանգի մէջ պիտի դնէք։

Ուստի կ'աղաչեմ, Տէր իմ, այդ դիտաւորութիւնդ փոխեցէք. պատերազմի յաջողութեան վրայ ամենեւին կասկած մի՛ ունենաք. քիչ մը վերջը ես անձամբ պիտի հնչեցընեմ Ձեր ականջին յաղթութեան ուրախութիւնը։

Ս. ՆԵՐՍԷՍ

Հաւանէ՛ Պապ։

ՊԱՊ

Քաջասիրտ զօրապետներս, յոյս ձեր՝ վրայ դրած եմ։

ՄՈՒՇԵՂ ԵՒ ՍՄԲԱՏ

Եւ մենք Երկնից վրայ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Յառաջացէք ուրեմն անվեհեր։ Երկի՛նք ըղձեղ պաշտպանէ, ձեր բազուկները զօրացընէ, և պարգեւէ թշնամեաց վրայ փառաւո՛ր յաղթութիւն մը։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ա՛ղէ ուրեմն։ (Սո՛ւրը հանելով)

ՍՄԲԱՏ

Ի զէ՛ն։ (Նոյնպէս)

ՄՈՒՇԵՂ

Ի վրէ՛ժ Հայրենեաց։ (Նոյնպէս)

ՊԱՊ

Ողջամբ դարձէլիք յաղթութեամբ։
(Պապ, Ներսէս և Վաղարշն դաշ՝ մի՛-անիրը կ'երթան։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Հաստատուն եմ Տէր իմ, որ ասանկ ջղապինդ բազուկներու տակ թշնամին պիտի ընկճի։

ՊԱՊ

Վստահ եմ, բայց ո՞ւշապի սիրտս կ'եռայ նոյն փառքին ես ալ մասնակից ըլլալու։

Ս. ՆԵՐՍԷՍ

Արդէն այս փառքը Ձեզի համար է, Տէր իմ։ Խոհեմութիւնը պատերազմի ամենէն զօրաւոր զէնքն է. ուր քաջութիւն առանց խոհեմութեան՝ անընդունելի, և մանաւանդ վտանգաւոր է շատ անգամ։

ՎԱՂԱՐՇ

Յարձակումը սկսաւ . . . . . ։

ՊԱՊ

Եկէք Սրբազան Հայր, եկէք, գոնէ այս ժայռիս վրայ ելնենք եւ պատերազմի վիճակը դիտենք։

Ս. ՆԵՐՍԷՍ

Վանէ՛ Թշնամիները բարեգութ Աստուած, զօրացո՛ւր մեր բանակը՝ որ քու Ամենասուրբ հաւատքդ պաշտպանելու համար կը պատերազմի . . . .։

ՎԱՂԱՐՇ

Թշնամին կը տկարանայ . . .։

ՊԱՊ

(ժայռին վրայէն) Մերուժան կը փախչի . . . ձիէն վար ինկաւ . . . բանակէն դուրս կ'ելնէ . . .։

Նայեցէք Սմբատը, քա՛ջ Սմբատը, որ արագընթաց նժոյգի մը պէս անոր ետեւէն կը վազէ . . . կը հալածէ . . . աներեւոյթ եղաւ . . .։

(ժայռին վրայէն կ'իջնէ դէպ 'ի փէսարանին ներսը։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Ի՞նչպէս Թշնամին շուարեալ փախչիլ կ'ուզէ և չը կրնար։

(Նոյնպէս ժայռին վրայէն ներս կ'երթայ։)

ՎԱՂԱՐՇ

Ո՛վ երջանկութիւն, յաղթութիւնը մեր կողմն է։

(Նոյնպէս կը մտնէ։)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Սմբատ իր մտնէ Մերուժանի թեւերը կապած. մէկ ձեռքով երկաթէ շամփուր մը կը բռնէ, եւ միւսով Մերուժանի մազերէն կը քաշէ։

ՍՄԲԱՏ

Հիմայ զքեզ թագաւոր պիտի պսակեմ, որովհետեւ Հայոց վրայ թագաւորել կ'ուզէիր։

ՄԵՐՈՒԺԱՆ

Կ'աղաչեմ զիս 'արձակէ՛, խօսք կ'ուտամ ասկէ վերջը Ճշմարիտ Հայ ըլլալու, եւ շատ ընծաներ կը պարգեւեմ քեզ . . .։

ՍՄԲԱՏ

Ընծա՞յ, կորո՛ւստը երթայ քեզի հետ նաեւ քու ընծադ։ Ի՞նչ փոխարէն կրնաս տալ դուն, որ քու այնչափ վնասներուդ, թափել տուած անմեղ արիւններուդ, և Հայաստանի աւերակներուն տեղը լեցընէ։

ՄԵՐՈՒԺԱՆ

Ի՛նչ որ կ'ուզես, միայն թէ զիս աղատէ։

ՍՄԲԱՏ

Քու կեանքդ, և ասով իմ Հայրենիքս անգութ գաղանի մը ձեռքէ կ'աղատեմ։

ՄԵՐՈՒԺԱՆ

Իմ կեանքս, ես անգութ գաղա՞ն... ահ, դուն ինձի հետ ձեռքերս կապած կը խօսիս։

ՍՄԲԱՏ

Քու կեանքդ այո՛, որով նախատինք եղար դուն մարդկութեան եւ Հայաստանի. քու կեանքդ՝ որ գաղանի մը կեանք էր, անգութ ճիւաղի մը, հրեշի մը...։

ՄԵՐՈՒԺԱՆ

Յիշէ՛ Սմբատ, Մերուժանն եմ ես. յիշէ՛ իմ աստիճանս, յիշէ՛ իմ կարողութիւնս՝ զոր ձեռքերս կապուած ժամանակ իսկ կրնամ ցուցունել։

ՍՄԲԱՏ

Յիշե՛մ... բայց յիշելով իմ զայրոյթս կը գրգռի. Մերուժա՞ն ես դուն, Հայրենեաց մատնիչը, աշխարհի սոսկումը եւ Երկնից անէծքը։

Քու աստիճանդ՝ քու դատակնիքդ է այս շամփուրիս վրայ գրուած։ Այս աստիճանը քու ճակտիդ վրայ պիտի դրոշմեմ հիմայ՝ որուն փափաքեցար. եւ որուն հասնելու համար, ամէն գութ և կարեկցութիւն խեղդեցիր։ Մոռցա՞ր՝ որ Հայաստանի զաւակ մ'էիր դուն. մոռցա՞ր՝ որ Հայրենիքդ էր քու փառասիրութեանդ զոհ եղողը...։ Բանական զգացմունքը եւ գութը քու աւերիչ ոտքիդ տակ կոխեցիր. գոյեցիր քու ականջդ անմեղներու հառաչանաց. անպատուեցիր Հայ անունը՝ որով կոչուելու անարժան էիր։

Արդ՝ Մերուժա՞ն, քու այսչափ աղէտներուդ փոխարէն, այս շամփուրովս զքեզ պիտի պսակեմ. և չէ՞ թէ միայն զքեզ, այլ և քու յաջորդներդ, եթէ երբեք կրնան գտնուիլ քու անհետանալէդ վերջը. յառա՞ջ.....։

ՄԵՐՈՒԺԱՆ

Սմբա՛տ, քաջդ Սմբա՛տ, երբ զղջամ ու պաղատիմ քեզի, իմ զղջումս պէ՞տք է որ ապարդիւն թողուս։

ՍՄԲԱՏ

Ամէն աղաչանք եւ խնդիր այս շամփուրիս ծայրն է... գիտե՞ս Մերուժա՞ն, իբրեւ բաղրատուունի՝ իշխանութիւն ունիմ թագաւոր պըսակելու։

ՄԵՐՈՒԺԱՆ

Բայց թող այդ կծու նախատինքները Սմբատ, գութ ունեցիր իմ վրաս։

ՍՄԲԱՏ

Գութ, եւ քո՞ վրադ . . . գթացի՞ր դուն անողորմ, երբ Աստուածային սուրբ Սեղանները հրատուններու փոխեցիր. գթացի՞ր, երբ անթիւ անձեր Քրիստոնէութեան համար զոհել տուիր. գթացի՞ր անգութ, երբ պանծալի Հայաստանը կ'ուլար . . . ։

Ա՜հ, դուն ինձմէ գթութիւն մի խնդրեր. դուն իմ Հայրենիքս աւերակ դարձուցիր. դո՜ւն . . . չ'եմ կրնար համբերել. թաղուի՛ քու անունդ երկրիս անդունդներուն տակ. չ'ըսուի՛ որ Մերուժան Հայ մ' էր . . . ա՜ղէ . . . . . ։

ՄԵՐՈՒԺԱՆ

Ո՛վ Երկինք, եւ չ'ես ուզեր այս թշուառ վիճակիս մէջ զիս աղատել։

ՍՄԲԱՏ

(Մաղերէն բռնելով) Կ'աղատեմ իմ Հայրենիքս . . . . ։

ՄԵՐՈՒԺԱՆ

Թո՛ղ ուրեմն զիս, հեռա՛ւ, հեռա՛ւ Սմբատ. յուսահատութիւնը վրաս կը բռնանայ,

եւ մի՛ կարծեր որ զիս պիտի աղաչեմ քեզի։ Մերուժան Սմբատի ոտքը խոնարհի, թողութիւն խնդրէ եւ չ'ընդունի՞ . . . եւ ո՞վ ես դուն՝ որ զիս շամփուրով պիտի պսակես . . . ։

ՍՄԲԱՏ

Սմբա՛տ, Հայրենասէր Սմբա՛տը։

ՄԵՐՈՒԺԱՆ

Բայց երբ Մերուժան իւր վերջին վայրկենին մէջ բոլոր ոյժը ամփոփէ, կարո՞ղ է քեզի պէս տա՛սը Սմբատ իւր բարկութեանը զոհ ընել։

ՍՄԲԱՏ

Բայց մոռանա՞ է որ Սմբատ մը հիմայ մէկ վայրկենի մէջ քու բոլոր ոյժդ՝ եւ դքեզ ալ մէկտեղ պիտի ոչընչացընէ։

ՄԵՐՈՒԺԱՆ

Ոչինչանամ Սմբատի՛ ձեռքով . . . մի՛ մօտենար . . . դողա՛ այս աչքերէն՝ որ կատաղութեամբ կը լեցուի . . . ։

ՍՄԲԱՏ

Եւ մահուան ստուերով պիտի փակուի . . . ։

ՄԵՐՈՒԺԱՆ

Կարողութիւն մը . . . հեռացի՛ր անգութ, ամէն բան աչքիս առջեւ կը սեւնան . . . ։

(Կապերը կը ֆակէ ու վրան կը վազէ։)

ՍՄԲԱՏ

Այսպէս ուրեմն կ'ուզես դուն վրաս յարձակիլ։

(Սո՛ւրը հաղելով։)

ՄԵՐՈՒԺԱՆ

Այսպէս ուրեմն կ'ուզես դուն հետս կռուիլ. վատասիրտ, ձգէ սուրդ գետին և եկուր հետս կռուելու . . . ։

ՍՄԲԱՏ

Իմ սուրս քու անօրէն սրտիդ համար պահած եմ. ես վատասիրտ, և Մերուժանի մը բերնէ կը լսեմ այս նախատինքը. ալ Մերուժան, պատրաստուէ վերջին հարուածիդ . . . ։

(Սրով վրան կը յարձակի։)

ՄԵՐՈՒԺԱՆ

(Տէսարանին բոլորտիքը վազելով) Ա՜հ, դաշոյն մը . . . ։

(Երկու զինուոր ժայռին վրայ կ'ելնեն։)

Ա. ԶԻՆՈՒՈՐ

Մերուժա՜ն . . . ։

(Տէսարանէն վար կ'իջնէ։)

Բ. ԶԻՆՈՒՈՐ

(Ժայռին վրայէն) Բռնեցէք զինքը . . . ։

(Նոյնպէս վար կ'իջնէ։)

ՍՄԲԱՏ

(Հարուածը մը փալով Մերուժանի վազած ժամանակ.)

Բռնեցէք . . . ։

(Մերուժան կը բռնուի զինուորներէն։)

ՄԵՐՈՒԺԱՆ

Թող տուէք զիս . . . . . ։

ՍՄԲԱՏ

Ա՛լ սպասելու ժամանակ չը կայ, երթանք. գքեզ պիտի սպանեմ այս շամիուրով. երթանք, գուցէ Սրբազանը գալով քու վրադ կը գթայ։ Մերուժան անունը նախատինք պիտի սեպուի ասկէ ետքը։

(Կ'երթան։)

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

(Դուրսէն) Յաղթութիւն, յաղթութիւն, փառաւոր յաղթութիւն։

ՊԱՊ, Ս. ՆԵՐՍԷՍ, ԿՈՍՏԱՆԴ, ՎԱՂԱՐՇ

(Բոլորին վրայէն հեղուկներ թափելով։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Երջանիկ օր։

ՊԱՊ

Բարեբաստիկ օր։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ուրախացիր վեհդ Հայաստան։

(Տերենտիանոս կը մտնէ։)

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Յաղթութիւն կ'աւետեմ, թշնամեաց բանակը կորագլուխ ջարդուեցաւ։

ՊԱՊ

Քա՛ջդ Տերենտիանոս, ի՞նչ երջանիկ օր է այս. ի՞նչ բերկրաւիթ օր, որ փառաւոր յաղթութեամբ Հայաստան պիտի դառնանք։

Ս. ՆԵՐՍԷՍ

(Տերենտիանոսին) Եւ ուր քու քաջութիւնդ ամէն բերան պիտի խօսի։

(Մո՜ղեղ կը մտնէ յեռ՝ սաղա՜տրպ մը և սո՜ր մը։)

ՄՈՒՇԵՂ

Ահաւասիկ Տէր իմ, Ուռնայը Աղուանից գոռոզ թագաւորին սաղաւարտը եւ սուրը.

զինքը մէկ հարուածով մը գետին թողուցի. չ'ուզելով որ պսակեալ գլուխ մը իմ ձեռքովս խնայ։

ՊԱՊ

Ո՛վ քաջդ Մուշեղ, բայց ո՞ւր է Սմբատ։

ՄՈՒՇԵՂ

Անի հրացեալ շամփուրով մը Մերուժանը կը պսակէ։

ՊԱՊ

Մերուժա՛նը, կատարեա՛լ ուրախութիւն։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ազատեցա՛ւ Հայաստան բռնաւորի մը ձեռքէ։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ահա՛ ինքը։

(Սմբատ կը մտնէ։)

ՊԱՊ

(Գրկելով զայն) Բագրատունեաց պատիւը և Հայաստանի պարծանքը, սիրելի՛դ իմ Սմբատ։ Հայաստանի ազատիչը պիտի սեպուիս դուն։ Ո՜հ, տո՛ւր այդ շամփուրը, մեր յաղթանակն է այդ՝ որով Հայաստանի թշնամին խորտակեցիր։

ՍՄԲԱՏ

Անոր անշուշտ դիակը կը կենայ հիմայ պատերազմի դաշտին վրայ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այս է հայրենատեաց մատնիչի մը արժանի վիճակը և վարձատրութիւնը։

ՊԱՊ

Քաջասիրտ զօրապետներս, ես ինչպէս որ ձեզմէ բոլորը սրտանց շնորհակալ եմ այսպիսի փառաւոր յաղթութիւն մը ձեռք բերելնուդ համար, նոյնպէս և ապահով եղէք, որ ես ալ այնպիսի առիթներ պիտի տամ ձեզի՝ որ ինձմէ շնորհակալ ըլլաք։

Տերենտիանոս զօրավար, դուն որ այս յաղթութեան մասնակից եղար, չեմ մոռնար իմ սրտանց շնորհակալութիւնս եւ երախտագիտութիւնս գործքով ալ յայտնելու թէ քեզ, եւ թէ վեհափառ Ինքնակալիդ։ Հիմայ ամէն բանէ առաջ հանգստանալու հարկաւորութիւն ունինք. դառնանք ուրեմն Հայաստան, ուր ժողովուրդը անհամբեր մեզ դիմաւորելու կ'սպասէ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Այո՛, մեկնինք քաջասիրտ ոգիներ, երթանք Հայաստանի խաղաղութիւնը, փառքը և բարեկարգութիւնը վերստին հաստատելու։ Մեկնինք այս փառաւոր դաշտէս, ուր տեղ այսօրուան փառայ ու յաղթութեան անմահ յիշատակը յաւիտեանս անմոռանալի պիտի մընայ . . . . . ։

ԱՄԷՆՔԸ

Երթանք . . . . ։

(Կ'երգեն։)

ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԸ ԳՈՅՈՒԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ՁՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՍՄԲԱՏ (Ա-ՆՅԻՆ)

Ապո՞ն, ասոնք Տէրութեան մը կործանուելուն նախագուշակութիւններն են. կամայ կամայ բարեկարգութիւնը ձեռքէ կը ձգէ, զեղխութիւնը և անկարգութիւնը իրեն օրական զուարճութիւններն եղած են։ Հայաստանի Թագաւոր մը, ի՞նչպիսի Թագաւոր...։ Այս քանի՞ անգամ է որ սուրբ Հայրապետը զայն կը յանդիմանէ ու կը խրատէ. բայց ի զո՞ւր, այն ազգու խրատները անոր վրայ ազդեցութիւն մը չեն կրնար ընել։

Ես որ պատերազմի դաշտին մէջ Մերուժանի մեղապարտ արիւնը թափեցի՝ միթէ Հայրենեացս օգտին համար չէ՞ր, Հայաստանի ազատութեան համար. բայց երբ անոր օգուտը արհամարհուած կը տեսնեմ, երբ ազատութիւնը խեղդուած, և Հայաստան զեղխ բրոնաւորի մը ղղուելի կամայ դերի, նոյն է Թագաւոր մը՝ ինչ որ Մերուժան...։

(Մոռցեր կը մնայ։)

ՄՈՒՇԵՂ

Ո՞ՐՉԱՓ վրդոված կը տեսնեմ զքեզ, քա՛ջդ Սմբատ. այո՛, պատճառը ինձ գաղտնի չ՚է, իմ սիրտս ալ կը ցաւի այս անկարգութեանց վրայ։

ՍՄԲԱՏ

Աղնիւ Մուշեղ, կը վախնամ որ Աբշակայ աղէտները իր տղուն ձեռքով պիտի նորոգուին. յայտնի կը տեսնեմ որ թշուառութեանց ու աղէտից թանձր ու մութ ամպը՝ Հայաստանի մթնոլորտին վրայ դարձեալ ծանրանալու կը մօտի։

ՄՈՒՇԵՂ

Երբ այսպիսի թագաւոր մը ունինք . . . ։

ՍՄԲԱՏ

Ահա ինքը դաժան կերպարանքով մը կը մօտենայ . . . ։ Երթանք, քա՛ջդ Մուշեղ. մեկնինք այս տեղէն, որովհետեւ չ՚եմ ուզեր անոր երեսը տեսնել. բայց չէ՞ թէ Աբշակ իւր հայրը իմ սերունդս բոլորովին ջնջելուն համար իւր որդւոյն դէմ ատելութեան ոգի ունի՞, բնա՛ւ։

Գիտե՞ս Մուշեղ, որ ես իմ Հայրենիքս իմ անձէս աւելի շատ կը սիրեմ. և անոր բարութեան համար պատրաստ եմ միշտ արիւնս անգամ թափել, եթէ հարկ ըլլայ։ Երթանք,

գոնէ սուրբ Հայրապետը աղաչենք, որ անգամ մ՚ալ զայն խրատէ. թէպէտ և իրեն խօսքերը մի եւ նոյն ազդեցութիւնը պիտի ընեն անոր վրայ։

ՄՈՒՇԵՂ

Երթանք Հայրենասէր Սմբատ, երթանք Սրբազանը գտնելու։

(Կ՚երթան։)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

(Պապ կը մտնէ։)

ՊԱՊ

Ի՞նչ ըսել ըլլայ, միթէ ես այս թագաւորական թագն ու գաւազանը ուրիշէ յանդիմանութիւն լսելու համար կը կրեմ . . . ։ Իմ բռնած ընթացքս Ներսիսի հաճոյ չը թուիր։ Եւ ինչո՞ւ, և ի՞նչ իրաւունք ունի հաւնելու կամ չը հաւնելու . . . ։ Ներսէ՛ս՝ Պապայ իշխանութեան տակն է, և ո՛չ Պապ՝ Ներսիսի. քանի որ այս երկրիս օրինաւոր թագաւորն եմ, իմ ըրածներուս դիմահար մէկը պէտք չ՚է գտնուի։

Ե՛ս կը հրամայեմ հոս, ես կը վճռեմ, եւ ամէն մարդ նաեւ Ներսէս՝ որ ինքզինքը Պապէն զօրաւոր կը կարծէ, պէտք է ինձ խոնարհի և հնազանդի . . . :

(Վաղարշ կը մտնէ :)

ՎԱՂԱՐՇ

Տէր իմ, սուրբ Հայրապետը քիչ մը ժամանակ զքեզ տեսնել կ'ուզէ :

ՊԱՊ

(Դարձեալ կ'ուզայ իմ անդորրութիւնս վրդովելու . . . պիտի չը լսեմ իրեն, պիտի չը թողնեմ՝ որ ինձ ներկայանայ :) Չէ՛, Վաղարշ . . . բայց ինչո՞ւ չ'է, ինչո՞ւ չ'եմ ուզեր անոր ներկայութիւնը, ինչո՞ւ կը դողամ անոր հետ խօսելու . . . անոր աչքերը իմ վրաս ազդեցութիւն մը ունին . . . անոր ձայնը իմ հոգւոյս խորը կը զարնէ . . . . :

Ո՜յժ առ Թուլասիրտ Պապ, Թագաւոր մը ես դուն, համարձակ եղիր և դիմէ . . . : Բայց ո՞ւր դիմեմ, ահա՛ ինքը կը մօտենայ. ինչ վեհ կերպարանք, ինչ ազդու նայուած. բայց ատելի՛ է ինձ, չ'եմ ուզեր անոր նայիլ, համարձակութիւն . . . :

(Ամբոխին վայ կը նոպի :)

(Ս. Ներսէս կը մտնէ :)

Ս. ՆԵՐՍԷՍ

(Ձ'ախորժիր իմ ներկայութենէս. այս կերպ ընդունելութիւն . . . :) Ողջո՛յն Թագաւոր Տէր :

(Պապ չը պատասխաներ :)

Ողջո՛յն Թագաւոր Տէր :

ՊԱՊ

(Ա՜ռանց ամբոխին երեսը՝) Քիչ մը յառաջ քու Թագաւորդ կը յանդիմանէիր, և հիմա կ'ողջունե՞ս . . . :

Ս. ՆԵՐՍԷՍ

Եթէ զքեզ յանդիմանեցի, Հայրենեաց օգտին համար էր. գիտցած եղիր Պապ, Հայրենեաց օգուտը քեզմէ նախամեծար է : Երբ անձնասիրութեան համար անիկայ կը զոհուի, երբ անկարգութիւնը ու զեղխութիւնը անոր պատիւը կ'արատեն, իմ յանդիմանութիւններս ալ պիտի չը դադրին :

ՊԱՊ

Բայց աւելորդ է այդ յանդիմանութիւնները կրկնել, երբ անօգուտ են և ազդեցութիւն մը չ'են կրնար ընել :

Ս. ՆԵՐՍԷՍ

Աւելորդ է ուրեմն իշխանութիւն մը՝ որ Հայրենեաց վնասակար է։

ՊԱՊ

(Ոտի վրայ ելնելով) Մտածէ՛ ըսածիդ վրայ Ներսէս . . . գիտես որ ձեռքէս ամէն բան կ'ուզայ . . . մի՛ գրգռեր իմ բարկութիւնս . . . ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Բարկացի՛ր . . . բայց բարկութիւնդ ինձ վնասելու չափ չը կրնար զայրանալ։

ՊԱՊ

Բայց . . . (Ձեռքը սուրին վրայ դնելով։)

Ս. ՆԵՐՍԷՍ

(Ձեռքը սրին վրայ դնելով) Ահաւասիկ ատոր պատասխանը . . . կը հասկընամ քու չարագործ միտքդ, բայց ինձ վախ չը պատճառեր . . . ։ Միտքդ բե՛ր ապերախտ, միտքդ բե՛ր. Հայրենեացս Թշուառութեանց վրայ Թէոդոս Կայսեր առջեւ յորդ արտասուք թափեցի, որպէս զի զքեզ թագաւորեցընէ։ Ի՛նչ, Հայաստանի աղէտները պիտի նորոգես քու անկարգ, զեղխ ու անպիտան իշխանութեամբդ։ Հայոց ժողո-

վուրդը՝ որ դեռ իր քաշած տառապանքները ու նեղութիւնները չէ մոռցած, վերստին թշուառութեանց մէջ գահավիժել կ'ուզես։

Միտքդ բե՛ր Արշակ, քու անագորոյն ու անխիղճ հայրդ յիշէ՛. որ թէպէտ իր գործած պակասութիւնները ժամանակին չէր իմանար, բայց վերջէն Անյուշ բերդին մէջ հասկընալով՝ որ ամէն թշուառութեանց պատճառ ինքն էր եղած իւր անկարգ կառավարութեամբը, յուսահատութենէ ինքզինքը բանտին մէջ սպաննեց։

Ուզո՞ւմ կ'ըսեմ քու ընթացքդ. Աստուած՝ որ զքեզ այդ պաշտօնին յատկացուց, քեզմէ հաշիւը պիտի փնտռէ. այս քու իշխանութեանդ տակ եղող ժողովրդոց կառավարութիւնը՝ քեզմէ պիտի պահանջէ։ Մտածէ՛ ասոնք, և իսկոյն պիտի զգաս որ ո՛չ վաղանցուկ փառացդ կրնաս վստահիլ, ո՛չ անցաւոր զօրութեանդ և ո՛չ դիւրեղծական մարմնոյդ. ասոնք ամէնն ալ պիտի բաժնուին քեզմէ. մերկութիւնն է ամէն բանի վերջը։ Մտածէ՛ ասոնք, և քու անձիդ ու հոգւոյդ, մանաւանդ Հայրենեացդ Թշուառութիւն մի՛ պատճառեր։ Խօսէ՛ ուրեմն, պիտի ուզո՞ս քու ընթացքդ։

ՊԱՊ

Գիշ չէ՛ այս ընթացքս։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ո՛Վ Երկինք . . . աղէկ կ'երեւի քեզ. հարիւրաւոր անձեր բանտերու ու բերդերու մէջ ծանր շղթաներու տակ յանիրաւի կը հեծեն ու կը հառաչեն. անմեղ արիւններ օրէ օր երկիրս կը ծծէ. անկարգութիւնը, ղեղխութիւնը կը թագաւորէ պալատիդ մէջ, չ'է թէ դուն . . . կ'աղաչեմ քեզի Թագաւոր Տէր, կը պաղատիմ, փոխէ այդ քեզի աղէկ երեւցած ընթացքը՝ որ չը գրչաս :

ՊԱՊ

Հեռացիր Ներսէս, բաւական է, բաւական է որչափ որ խօսեցար. քու խօսքերդ բնաւ իմ վրաս ազդեցութիւն չ'ունին. իմ Թագաւորական աստիճանիս մէջ՝ չ'եմ ուզեր մէկէ մը յանդիմանութիւն լսել :

Ս. ՆԵՐՍԷՍ

Քանի որ ատանկ յամառ ես ու պիտի ըլլաս, ես ալ իմ ունեցած իշխանութեամբս՝ կը զրկեմ զքեզ Եկեղեցական յարաբերութենէ, և ասկէց վերջը կարող չ'ըլլաս Եկեղեցի մտնել :

ՊԱՊ

(Ա՛հ.)

Ս. ՆԵՐՍԷՍ

Այո, անկարգ իշխանի մը համար արդար և իրաւացի պատիժ մ'է այս :

(Կը մեկնի :)

ՊԱՊ

(Ա-անչին) Եկեղեցական յարաբերութենէ զրկուած . . . և ինչո՞ւ համար. ո՞վ է այս անձը՝ որ կը համարձակի ինձ դէմ այսչափ խստութիւն բանեցընել . . . Ներսէս . . . եւ որո՞ւ վստահանալով իմ գործերս կը յանդիմանէ . . . :

Գիտնալ պէտք է որ Պապ շատ հնարքներ գիտէ՝ մարդս մէկ վայրկեանի մէջ յերկիր կործանելու. գիտնալ պէտք է որ Թագաւորի մը դէմ խօսիլը՝ իրեն շատ սուղ կրնայ նստիլ : Եւ ինչո՞ւ կը Թողում որ տակաւին այս մարդը ապրի. որպէս զի ամէն գործքիս մէջ ինձ արգելք ըլլայ : Բաւական է ալ որչափ որ ապրեցաւ, հերիք է որ զիս օրէ օր բարկացընէ, տամ անոր մահուան վճիռը, պատուիրեմ որ իսկոյն գլխատեն զայն . . . :

(Երիտասարդ վայրենի մը կը կանչէ :)

Բայց չ'է, Հայաստանի մէջ անթիւ պաշտպան ունի, որոնք անոր անակնկալ մահը տեսնելով՝ կը գրգռուին, և գուցէ իմ անդորրութեանս վնաս մը կը հասցընեն : Ուրեմն խարդա-

խուբեամբ զայն կերակուրի հրաւիրեմ նամակով մը, եւ այս պալատիս մէջ իր կեանքը վերջացընեմ։

(Կ'երթայ։)

ՏԵՍԱՐԱՆ Դ.

(Սմբատ կը մտնէ։)

ՍՄԲԱՏ

Անօգուտ ամէն աղաչանք եւ ազդարարութիւնք. կը ցաւի սուրբ Հայրապետը՝ որ իւր խրատները ոտքի տակ կ'երթան. կը ցաւիմ եւ ես՝ որ Արշակ այսպիսի զաւակ մը թողուց, Հայրենիքս թշուառացընող։

Ո՛վ երկինք, միթէ անդառնալի վճիռ մը տուած ես Հայաստանի վրայ, որ ասանկ բըռնաւորներու լուծին տակ ճնշուի։

(Տերենտիանոս և Մուշեղ կը մտնեն։)

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ուրախացէք քաջդ Սմբատ, խաղաղութիւն հաստատուեցաւ Թագաւորին եւ Սրբազանին մէջ։

ՍՄԲԱՏ

Խաղաղութիւն....։

ՄՈՒՇԵՂ

Այո՛, Սրբազանը կերակուրի հրաւիրուած է, և դուրսը մեծ պատրաստութիւն կը տեսնուի։

ՍՄԲԱՏ

Երանի թէ այնպէս ըլլար, բայց չեմ կարծեր։

(Վաղարշ կը մտնէ։)

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Ահա Վաղարշ՝ աւելի աղէկ կրնայ զրուցել մեզ։

ՍՄԲԱՏ

Սրբազանը կերակուրի՞ հրաւիրուած է Վաղարշ։

ՎԱՂԱՐՇ

Այո՛ Տէր իմ։ Ես զինքը գացի հրաւիրելու։

ՄՈՒՇԵՂ

Եւ պիտի գա՞յ։

ՎԱՂԱՐՇ

Քիչ մը վերջը հոս կը գտնուի։

ՍՄԲԱՏ

Ուրիշ ո՞վ հրաւիրուած է սեղանի,

ՎԱՂԱՐՇ

Թագաւորէն եւ Սրբազանէն զատ՝ ուրիշ մէկը պիտի չընտի սեղանը, նոյնպէս եւ այս սենեկիս մէջ . . . . ։

ՍՄԲԱՏ

Գնա՛ ուրեմն Վաղարշ։

(Վաղարշ կը մեկնի։)

Զօրապետնե՛ր, հոս դաւադրութիւն մը կայ, դաւադրութիւն . . . ա՜հ, անօրէն Պապ, վատասիրտ Թագաւոր։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Բայց ի՞նչ կը խօսիս, քա՛ջդ։

ՄՈՒՇԵՂ

Ի՞նչ դաւադրութիւն է այդ։

ՍՄԲԱՏ

Զը լսեցէ՞ք որ իրենցմէ զատ ուրիշ մարդ պիտի չընտի սեղանը. ասանկ ուրախութեան մը ժամանակ, պէտք չէ՞ր որ իր զօրապետներն ալ սեղանի հրաւիրէր. բայց դաւադրութիւնը երկչոտ է, առանձին տեղեր կը փնտռէ։ Թո՛ղ տուէք զիս զօրապետներ, հոս պիտի սպասեմ ես, հոս անոր դաւաճանութիւնը պիտի խորտակեմ։

ՄՈՒՇԵՂ

Կ'աղաչեմ քա՛ջդ Սմբատ, կեանքդ վտանգի մէջ մի՛ դներ։

ՍՄԲԱՏ

Սիրտս լցուած է սիրելի՛դ իմ Մուշեղ, առիւծ ելնէ դէմս չ'եմ վախնար։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Եւ միթէ կը կարծե՞ս դուն՝ որ Թագաւորը համարձակի պալատին մէջ այնպիսի անձի մը կեանքը խարդաւանել։

ՍՄԲԱՏ

Կը հաւատամ, Թո՛ղ թէ կը կարծեմ։

(Վաղարշ կը մտնէ։)

ՎԱՂԱՐՇ

Թագաւորը հոս կ'ուգայ։

(Վաղարշ կը մտնէ։)

ՄՈՒՇԵՂ

Երթանք, արիասիրտ Սմբատ։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Երթանք, եթէ այդչափ կասկած ունիս՝ քաշուինք տեղ մը, և այս բանիս առջեւն առնելու ճար մը խորհինք։

ՍՄԲԱՏ

Վատասիրտ Պապ։

(Կ'երթան։)

ՏԵՍԱՐԱՆ Դ.

(Պապ ձեռքը թունոյ շիշ մը բռնած՝ եւ Վաղարշ կը մտնեն։)

ՊԱՊ

Սեղանը այս սենեկիս մէջ պատրաստէ Վաղարշ։

(Վաղարշ կը մտնէ։)

Պիտի հանդարտիմ ալ անանկ ծանր յանդիմանութիւններ լսելէ. մինչեւ անգամ համաձակեցաւ զիս ասկէ եաքը Եկեղեցի երթալէ արգիլել։ Եկուր Ներսէս, եկուր՝ որ քու վերջին ճաշդ ընես, եկուր մահդ հոս քեզի կ'ըսպասէ։

(Վաղարշ կը մտնէ։)

ՎԱՂԱՐՇ

Տէր իմ, Սրբազանը կ'ուգայ։

ՊԱՊ

Շատ բարի։

(Վաղարշ կը մտնէ։)

Ձեռքերս կը դողան, սիրտս կը տրոփէ, արիութիւն, ահա մօտեցաւ . . . ։

(Ս. Ներսէս կը մտնէ։ Վաղարշ ի՛նչի սեղանը պատրաստել։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Ի՜նչ ուրախութիւն, ի՜նչ երջանկութիւն, սիրելի՛ Թագաւորս։

ՊԱՊ

Ներեցէ՛ք ինձ պատուական Հայր, եթէ յանիրաւի շատ անգամ ձեր վեհանձն սիրտը վշտացուցած ունիմ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ես արդէն ներեցի։ Բայց ասիկայ ինձ զարմանք կը պատճառէ, որ ինչպէս Ձեր կիրքը և զայրոյթը քիչ մը ատենուան մէջ այսպիսի հեղութեան փոխուեցաւ։

ՊԱՊ

Աստ բանին վրայ զարմանալ պէտք չէ՛ Սրբազան Հայր. ատիկայ Աստուծոյ մէկ սքանչելիքը կրնայ սեպուիլ, որ ձեր վերջին խօսքերը իմ վրաս խորունկ տպաւորութիւն ըրին։

Ս. ՆԵՐՍԷՍ

Աստուծոյ քով անկարելի բան չը կայ։

ՊԱՊ

Ուրեմն սեղանը պատրաստ է Սրբազան Հայր։

Ս. ՆԵՐՍԷՍ

(Դեռ կասկածը իմ սրտէս չը փարատիր։)

(Սեղանը կը նոպին։)

ՊԱՊ

Յերաւի այսօրուան պէս ուրախութիւն շատ քիչ անգամ ղգացած եմ։

Ս. ՆԵՐՍԷՍ

Զէ՛ թէ միայն դուք, վեհափառ Տէր, այլ և Հայաստան պիտի ուրախանայ։

(Դուրսէն կ'երգեն։)

Խնդայ երկին
Աղաստ 'ի վեր ծածանին
Դրօշակք փառաց,
Յորիւն թարմ սէգ ոսոխաց
Փայլք սուսերաց
Ի ջինջ ճաճանչ արեգին
Շողան փայլին.
Խնդայ երկին։

Կայցէ անանց
Այս յիշատակ պերճ փառաց.
Ի սիրտ քաջաց
Գանդակեսցի անմոռաց,
Յորդիս Հայկայ
Եւ փառք վսեմ Հայկազանց.
Խնդայ երկին, և այլն։

Ս. ՆԵՐՍԷՍ

Ժողովուրդը Հայաստանի փառաւոր յաղթութիւնը կը յիշէ ու կ'երդէ։

ՊԱՊ

(Ժամանակ է։)

(Թոյնը կը դնէ գաւաթին մէջ գաղտնապէս։)

Սիրուն եղանակ . . . խմենք Տէր իմ, գաւաթ մը գինի այս ուրախութեան վրայ։

(Գինին կը լցնէ և թոյնը եղած գաւաթը Ներսէսի կ'ուղղէ։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Թէ եւ սովորած չեմ, բայց այս ուրախութեան վրայ կը խմեմ։

(Կը խմէ։)

Վեհափառ Տէր, այս աշխարհիս վրայ մի միայն մեր գործերուն յիշատակը պիտի մնայ, թէ բարի և թէ չար. բայց հանդերձեալ աշխարհին մէջ անոնց վարձատրութիւնը պիտի ընդունինք, կամ արքայութիւն և կամ դժոխք։

Ի՞նչ վախճան ունեցաւ Արշակ հայրդ, ինքզինքը ըրած չար գործերով ատելի ըրաւ, թէ մարդկան և թէ Աստուծոյ. և բանտին մէջ յուսահատութենէ անձնասպանութեան սոսկալի մեղքն ալ գործեց։ Արշակ թագաւորը՝ օրինակ ըլլայ քեզ չարիք չը գործելու. աղէկ գիտնաս որ չարն անպատիժ չը մնար, նոյնպէս եւ բարին առանց վարձատրութեան . . . . ։

Բայց ի՞նչ կ'ըզգամ սրտիս մէջ . . . . ։

(Պապ երեսը կը դարձնէ և աչքերը կը գոցէ։)

Դուն կ'ուզես Պապ . . . ահ, միաքս կասկած մը կիյնայ . . . կարծեմ զիս թունաւորեցիր . . . ։ Թոյն կար բաժակիդ մէջ՝ զոր ինձ այնչափ սիրով մատուցիր . . . ։ Անգութ սիրտ, եթէ զիս մեռցընելու դիտաւորութիւն ունէիր, եթէ կը փափաքէիր որ իմ կեանքս աշխարհիս վրայէն վերցընես, ինչու՞ հրապարակաւ չի մեռուցիր. ո՞վ զքեզ կ'արգիլէր, ո՞վ քու անգութ ձեռքերդ կը բռնէր . . . . . ։ Ահաւասիկ հասար քու բաղձանացդ, ասկէց վերջը քու գործերդ՝ յանդիմանող մէկը չի կայ. գործէ ուզած չարութիւններդ, վասն զի Ներսիսի բերանը քիչ մը վերջը պիտի անշնչանայ. . . . . ։

Ես իմ մահուանս վրայ չեմ ցաւիր, կը նեղեմ քեզի . . . բայց կը ցաւիմ Հայաստանի վրայ, որ քեզի պէս բռնաւորի մը լուծին տակ պիտի ճնշուի. կը ցաւիմ՝ որ քու անօրէն հօրդ գործած անգթութիւնները պիտի գերազանցես. կը ցաւիմ՝ որ թշուառ Հայաստանի փառքը վերստին պիտի մարի. կը ցաւիմ՝ որ քահանայապետութեան աթոռը Լուսաւորչայ սերունդէն պիտի դատարկուի . . . ։

ՊԱՊ

(Անոր առջեւ ծնկան վրայ գալով) Ներէ՛ լինձ ո՛ պատուական Հայր. Թողութիւն տուր զքեզ սպանողին։

Ս. ՆԵՐՍԷՍ

(Նոր աղէալ) Ես արդէն ներեցի . . . . ո՛վ Տէր . . . Թողութիւն տուր զիս սպանողին . . . պահէ՛ զՀայաստան . . . . ։

ՊԱՊ

(Եղեալով) Ի՞նչպէս սոսկալի կերպիւ կը տիրէ վրան մահուան դեղնութիւնը, ո՛վ անգթութիւն . . . ։

(Պապ կը մեռնի։)

Ս. ՆԵՐՍԷՍ

Մա՛հ . . . կը տեսնեմ քու կերպարանքդ . . . բայց աւելի ուրախութիւն . . . քան թէ վախ կը պատճառես լինձ . . . ։ Խեղճ Հայաստան . . . աչքերս կը մթագնին . . . մա՛հ, ըն կսկ Տէր . . . ը դի՛ իմ . . . ։

(Կը մեռնի։)

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՍՄԲԱՏ, ՄՈՒՇԵՂ, ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ ԵՒ ԳԱՒԱՆ

ՍՄԲԱՏ

Ի՛նչ կը տեսնեմ . . . . ։

ԳԱՒԱՆ

(Դիակին վրայ էնալով) Ա՜հ, սուրբ Հայրապետս, դուն մեռա՞ր, Հայաստանի փառքն ալ հետդ առիր . . . ։

ՄՈՒՇԵՂ

Ո՛վ, տխո՞ւր օր։

ՏԵՐԵՆՏԻԱՆՈՍ

Զարադուշա՛կ օր։

ՍՄԲԱՏ

Սո՛ւգ առ Արարատ, քու բարերարդ մեռա՜ւ, ողբա՛, հեծէ՛, հառաչէ՛, փառքդ եւ պարծանքդ մարեցաւ. գայլին անհետացան այն երջանիկ օրերը, որ քու սուրբ Պաշտպանդ իւր օրհնեալ եւ Աստուածապարգեւ շունչը կը ինչէր . . . ։

Անոբէնդ Պապ, թէ եւ այսպիսի չնաշխարհիկ Անձի մը կեանքը խարդաւանեցիր, բայց անոր անմահ յիշատակը և անունը՝ յաւիտեանս կենդանի պիտի մնայ Հայաստանի և Հայ սրբոտերու մէջ։

ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԸ ԳՈՅՈՒԻ

504

1/1

Հայաստանի Ազգային գրադարան
NL0423473

44008

891.99
И-76